ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 20.08.2018թ. ԹԻՎ 733-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

28 օգոստոսի 2018թ.,
ժամը 15:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝

Ա.Ալավերդյան ՆԾ պետ

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

Ա.Կարախանյան ՆԾ ԱՆԿ ղեկավար

Ա. Մաջարյան ՆԾ ինժեներ

Հանձնաժողովի բացող անդամներ՝

Ա. Սայադյան ՆԾ ԱՆԿ ինժեներ

Գ. Սարգսյան ՆԾ ԱՆԿ ինժեներ

Հանձնաժողովի քարտուղար

Գ. Սարգսյան ՊԳՀԾ մասնագետ

Օրակարգ՝

1. Ընկերության կարիքների համար <<ՀԱՆ-ԳՀԾՁԲ-14/18>> ծածկագրով թռիչքուղիների ստուգման ծառայությունների գնման ընթացակարգի հայտերի բացում

Գ. Սարգսյանը տեղեկացրեց, որ գնումն իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Հանձնաժողովի նախագահը հրապարակեց սույն ընթացակարգի համար սահմանված նախահաշվային գինը՝ 50 000 000 ՀՀ դրամ :

Այնուհետև հրապարակվեցին հայտ ներկայացրած մասնակիցների տվյալները. ANS CR,s.e՝ Չեխիայի Հանրապետություն և <<SKY KG Airlines>> ՍՊԸ՝ Կիրգիզիայի Հանրապետություն:

Հրապարակվեց ՀՀ կենտրոկան բանկի 28.06.2018թ սահմանած փոխարժեքը՝ 1 եվրոյի արժեքը 565.04 ՀՀ դրամ և 1 դոլարինը՝ 482,73 ՀՀ դրամ:

Կից ներկայացվում են մասնակիցների գնային առաջարկները և ՀՀ կենտրոկան բանկի կայքից արված քաղվածքը:

Հ/Բ	Գնման առարկան	ANS, CR s.e		<<SKY KG Airlines>> ՍՊԸ	
		եվրո	ՀՀ դրամ	դոլար	ՀՀ դրամ
	Թռիչքուղիների ստուգման ծառայություններ	84000	47463360	65037	31395311

Մանակիցների ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովն արձանագրեց, որ <<SKY KG Airlines>> ՍՊԸ հայտը ներկայացված է միայն անգլերեն լեզվով:

Հանձնաժողովն առավել մանրամասն ուսումնասիրելով <<ՀԱՆ-ԳՀԾՁԲ-14/18>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի՝ <<*Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն*>> պահանջը, արձանագրեց, որ նշված ձևակերպումը հստակ չէ և տարակարծությունների առիթ է տալիս:

Հանձնաժողովը քննարկման արդյունքում, պարզաբանում ստանալու նպատակով, հեռախոսային կապի միջոցով (011800258՝ Վահե) դիմեց ՀՀ Ֆինանսների նախարարություն: Ի պատասխան հանձնաժողովի բանավոր հարցմանը, նախարարության մասնագետը նշեց, որ հրավերում հայտի լեզվին արված պահանջը պետք է հասկացվի՝ մասնակիցը հայերենից բացի, հայտը կարող է ներկայացնել նաև միայն անգլերեն և միայն ռուսերեն լեզուներով, այսինքն՝ <<SKY KG Airlines>> ՍՊԸ հայտը ենթակա չէ մերժման:

Հանձնաժողովը, հաշվի առնելով ՀՀ Ֆինանսների նախարարության բանավոր պարզաբանումը, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ <<SKY KG Airlines>> ՍՊԸ ընկերության գնային առաջարկը զգալիորեն պակաս է ANS,s.e ընկերության գնային առաջարկից:

Հանձնաժողովը միաձայն որոշեց.

1. <<ՀԱՆ-ԳՀԾՁԲ-14/18>> ծածկագրով թռիչքուղիների ստուգման ծառայությունների գնման ընթացակարգի ձեռքբերման 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<SKY KG Airlines>> ՍՊԸ-ին ,

2. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովին ներկայացնել <<ՀԱՆ-ԳՀԾՁԲ-14/18>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը,

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել համաձայն ՀՀ կառավարության 08.02.2018թ. թիվ 104-Ն որոշման 22-րդ կետի՝ փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Ա.Ալավերդյան		Հանձնաժողովի նախագահ
Ա.Կարախանյան		Հանձնաժողովի անդամ
Ա. Մաջարյան		Հանձնաժողովի անդամ
Ա. Սայադյան		Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան		Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան		Հանձնաժողովի քարտուղար